

Քաղաքի համար	12 ծր.
Տարեկան վեցամսեայ	6 »
Ստանդարտի համար	15 »
Վեցամսեայ	8 »
Ստանդարտի համար	3 սրյ.
Տարեկան վեցամսեայ	1.50 »
ԿԱՆԻՍԻՎ ԿՃԱՐԵԼԻ	
Մանուցման տպոյ տուրքին	
ընդհանուր համար 40 սակարկով	
և իսկ վերջին երեսի համար 20 սակարկով	
և երեքին սակարկով	
20 Օլո գնդը կըլուայ	
Վառնայի համար ձեռքի 10 սակարկով	

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ գրկեց
Խնայողութեամբ հասցիւն

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

«Իրաբանի» եւ յին տուր
Ստանդարտի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պաշտարանի համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

ՊՈԼՍՈՅ ՕՏԱՐ ՆԱՄԱԿԱՏՈՒՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Ֆրանսայի նախարարական խորհուրդը նիստ կազմելով նախագահ Պ. Լուպէի նախագահութեամբ՝ համաձայն գտնուած է Պաշտարանի գեղարվեստական բաժնի նախագահին և այսմասին կարգ մը հրահանգներ խորհուրդուած են Գոնսթանի:

Դեռ չի գիտցուիր թէ ո՞ր պիտի յանգին բանակցութիւնները, սակայն հաւանական է որ Սուլթանը տեղի պիտի տայ, հակառակ Ռուսիոյ գեղարվեստական համաձայնութեան յանկարծակի բաժնուելուն՝ այն առարկայի թեմա մը թէ Ռուսիա ճանկատանի մէջ նամակատուն չունի (•), մինչդեռ Սուլթանը Համիտի բարեկամ գերման կայսեր գեղարվեստը դեռ անբաժան է իր պաշտօնակիցներէն ու մանաւանդ գերման նամակատան տնօրէնը որ վերջերս Սուլթանէն պատիւներ ստացաւ, ամենախիստ պահանջուածներ կընէ:

Հարց բարձրացած է թէ օտար կառավարութիւնները ի՞նչ իրաւունքով նամակատուններ կը պահեն Թուրքիոյ մէջ. արդեօք թոյլ պիտի տրուէ՞ր Սուլթանին որ ինքն ալ թղթատարական մէջ մէկ մասնաճիւղ բանար Եւրոպայի մէջ ու չէ՞ մի որ Ապտիւլ Համիտ բացարձակ տէրն է իր երկրին:

Ի պատասխանի Եւրոպական թերթերը կը քննեն թէ արդարեւ Սուլթանը Համիտ տէրն է իր երկրին, բայց ոչ իր երկրին մէջ բնակող օտարահպատակներուն որոնց իրաւունքները կը պաշտպանուին քարթիթիւլասիոններով:

Քարթիթիւլասիոններուն առաջինը կընքուած է 1535 ին Թրանսսուա Ա.ի և Սուլթան Օիւլէյմանի միջև և փոստաներու վերաբերող դաշնագրութեան վերջինը 1740 ին եղած է:

Քարթիթիւլասիոններու տրամագրութիւններով օտարահպատակները Թուրքիոյ հողին վրայ առանձնաշնորհուածներ ունին:

Անոնք կը դատուին իրենց հիւպատոսական դատարաններու առաջ և կամ իրենց հիւպատոսներուն խիստ քոնթրոլին ներքև, անոնց բնակարանները անբռնաբարելի են, և այլն: Այս ամէնքը անոր համար որ Թուրքիոյ օրէնքները կարգ մը կէտէրու վրայ չեն համաձայնիր Եւրոպական օրէնքներուն որոնք բռնապետներու կամքովը երբեք չեն կրնար խաթարուիլ:

Բնականաբար այս պայմաններուն մէջ օտարահպատակները իրաւունք ունին պահելու նաև իրենց նամակատունները որոնք կը գտնուին գեղարվեստական պաշտպանութեան և հիւպատոսներու հակոցութեան ներքև:

Թուրքիոյ փոստան այնքան անկանոն, քիւժին և անվստահելի է որ օտարահպատակները բացարձակապէս իրաւունք ունին չի յանձնելու իրենց թղթակցութիւնները թուրք իշխանութեան որ ամէն վայրկեան տրամագիր է բանալ զանոնք և յիտոյ յանձնել ու մանաւանդ բնաւ չի յանձնել:

Ծիծաղելին սա է որ Համիտ յաւակնութիւնը կունենայ յայտարարելու թէ երկրին փոստան հրաշալի կանոնադրութեան մը մէջ կը գտնուի, հետևաբար պէտք է փակել միւս նամակատունները:

Արդ ինչո՞ւ թուրքերը իրենց վերջերս գրաւած Եւրոպական սուրճանգակը անկանոնութեամբ ցրուեցին. գոնէ այդ բռնաբարութեան միջոցին քիչ մը օրինապէս ըլլային որն որ ու շոշափելի ապացոյց մը ևս տուած չըլլային իրենց արտար բարբերուն:

Թուրքերը անգամ իրենց թըղթակցութիւնները կը յանձնեն օտար նամակատուններու և այս չէ՞ գլխաւոր պատճառը որ Սուլթանը կուզէ օտար երկիրներու հետ զնասակար թղթակցութիւն ունեցողները բռնելու համար տիրել նաև ամբողջ հրապարակին:

Սուլթանը Համիտ այնքան սարսափի մէջ է և ամէն օր նորանոր

դատադրութիւններու լուրերովը այնքան անհանգիստ որ է կը կարծէ թէ թղթակցութիւնները ձեռք անցնելով իր վիճակին դարման մը կրնայ տանիլ:

Երկրասարդ-թուրքերու ձեռնարկները զինքը ճշմարտապէս խնդրեցուցած են և Եւրոպական ամէն մէկ սուրհանդակի ծրարներուն մէջ դաւադրութիւն մը, դաշոյն մը կամ պոմպ մը կը տեսնէ: Սակայն չմտածեք թէ վաղը կրնայ աւելի կնճռոտ վիճակի մը մատնուիլ, շարունակելով ոտքի տակ տունել իր կառավարութեան կնքած դաշնագրութիւնները որոնք կարող են երկտըլի ու զուլթեամբ ու մը մը աւելի դիւրին պայթեցնել քան ունէ երեւակայական դաւադիր մը: Եւ արդէն կարելի՞ է որ Եւրոպայի պիտի տանձգութեան մը հանդէպ տեղի տայ, երբ վստահ է թէ անոր պիտի յաջորդեն ուրիշներ ալ:

Թուրքերը հիմակու հիմայ իրենց սխալը զգացած են, վաստիկ Մեծ-Եպարքոսը գիրով մը ցաւ կը յայտնէ գեղարվեստներուն թէ Գրան նախորդ նոթան անհաւճոյ եղած է կառավարութեանց ներկայացուցիչներուն և թէ թուրք պետութեան նպատակը եղած է մի միայն առաջը առնել մաքսանենգութեան և զնասակար գրութիւններու ի թուրքիա մտքին ու կը յուսայ թէ գեղարվեստները պիտի աջակցին (!) Գրան, փոստաններու խնդիրը թուրքիոյ նպատակարար կերպով լուծելու համար:

Չարմանալի չէ Եպարքոսին նենգ միամտութիւնը և աւանդական է արդէն թուրքերուն կարողութիւնը մեքենայութիւններ և շէրիլէյի շէրիաներ կազմակերպելուն մէջ, բայց անտոյր ալ չէ Եւրոպայի դիւրահաւանութիւնը:

Տեսնենք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՔՐԵՇ, 4 ՄԱՅԻՍ

Չատկէն գրեթէ քանի մը շաբաթ առաջ, գաղթականութիւնս ընդհանուր հաւաքում մը ունեցաւ կանխապէս որոշուած տեղ մը, քաղաքի մէջ ընթերցարան մը հիմնելու մասին խորհրդակցելու համար, որուն անհրաժեշտ պէտքը զգացած էին, ասկէ երկու տարի առաջ քանի մը երկտասարդներ, և «Պարտում» ալ այն ժամանակ իր բոլոր ուժով ժափահարած էր այս գովելի գաղափարը: Սակայն ինչ ինչ կուսակցական խուլ հակառակութիւններ գործին արդեւք հանգիստանալով, դժբաղդաբար եւրոպայացիներուն այդ փափաքը լոկ փափաք մնացած էր:

Բայց հիմա այդ պարոնները իրենց օժանդակ ուժեր գտնելով յաջողած են իրենց օգտաշատ գաղափարը իրագործել:

Այդ օրը ժողովին մէջ քանի մը պարոններ, ընթերցարանին պէտքը բացատրելով հասարակութեան հրաւեր կարդացին, որպէսզի ամէն անհատ աջակցի այն պէտքին իրագործման և հասարակութիւնն ալ խոստացաւ ամէն ջանք թափել սոյն նպատակը իրագործելու համար:

Վերջապէս ընդհանուր հաւանութեամբ, այդ օրը առժամանակեայ վարչութիւն մը կազմուեցաւ հետեւեալ անձերէ.

Պ. Պ. Յ. Պէպէրճեան առաջին ատենապետ, Յ. Պազլաճեան երկրորդ ատենապետ և. Լազարեան ատենադպիր և գրապահ. Ի. Իւզսիկեան գանձապետ Մ. Չիլինկիրեան անդամ, Խ. Տօլապեան անդամ. Ա. Աքսէրեան անդամ Յ. Մէնկէնէճեան անդամ:

Միևնոյն օրը բաւական գումար մըն ալ հանգանակուելով, վերջ դտաւ հաւաքումը, և ամէն գաղթական գոհ և զուարթ մեկնեցան, յաջողութիւն մագթելով առժամանակեայ վարչութիւնը կազմող անդամոց:

Քանի մը շաբաթ ետքը, ան-

միջապէս վարչութիւնը ժողով գումարելով, Պ. Վ. Մէս, ուճեանի մասնակցութեամբ, որ մասնաւորապէս հրատարակած էր վարչութեան կողմէն և պէտք եղածը տնօրինեց ընթացքարանի բացման գիւրդութիւններ ընծայելու համար:

Այժմ ընթացքարանի տեղը Գալիա Մաշիլուի պողոտային վրայ վարձուած, և պէտք եղած կահ կարասիք գնուած են ըստ բուսկանի, շնորհիւ վարչութեան ժրջան անդամներուն: (*)

Եւ վարչութիւնն ալ խոստացած է գաղթականութեան, սովորաբար մէջ հանգիստը կերպով ընթացքարանը բանալ ու յանձնել նոյն օրը ընդհանուր քուէարկութեամբ ընտրուելիք վարչութեան:

Գաղթականութեան կողմանէ թարգման կը հանգիստանամ վերոյիշեալ ազնիւ պարտններուն շնորհակալութիւններ յայտնելու: Այս ձեռնարկով կը յայտնուի թէ տեղւոյս կարգ մը գաղթական երիտասարդները պիտի աշխտին գինեմուտութեան, իսկապէս թեանէ և այլ միջոցներէ որոնց միակ գարմանն է իմ կարծիքով բարոյալից ընթացքներ ընելը:

(*) Յաւանք է ըսել թէ, Վանցի Գէորգ անունով յայտնի մէկը իր քոստա մորթովը ելաւ այլ եւ այլ տեղեր, վերոյիշեալ ազնիւ պարտններուն վեհ գաղափարը խեղաթիւրելու ըսել հարկ չի կոչու գաղթականութեանս թուքին արժանացաւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԿԵՐՈՒՆԻՍ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Պուրկարիոյ իշխան Յէրտինանտ մեծափառ չքեղութեամբ տանեց 1876 ապրիլի տարեդարձը, ուր պուրկարները առաջին անգամ ապստամբութեան գրօշը պարզեցին Սուլթանին դէմ:

Միեւնոյն ատեն իր նախարարները, չի գտնանալով Սօֆիայի Մակկոմիտիին նախադահն ու գլխաւոր անպամները բանտին մէջ արգիլելէ, Մակեդոնիոյ մէջ քանի մը պուրկարական զորքակազմութեանց փակումին գործնականապէս ալ գոհացում տուին:

Ուրիշ բառերով իշխանապետութեան կառավարութիւնը անցեալ յեղափոխութեան համար յարգանք կընծայէ, եւ զայն կուրանայ ու զայն կը հարուածէ ներկային մէջ:

Ասիկա լով ուրկարիոյ կամ Պալքանեան երկիրներու յատուկ երեւոյթ մը է: Աշխարհի բոլոր պետութիւնները—բոլոր անոնք գէթ ուր do facto օրինաւորութիւն մը հաստատուած է դարձ մը ի վեր de jure օրինաւորութիւն մը աւանակներուն վրայ—ինքզինքնին միեւնոյն կերպով գործելու անհրաժեշտութեան մէջ ըլլալ կը տեսնեն կամ կը կարծեն:

Պուրէշի հայ գաղթականութիւնը որ շատ պարագայի մէջ գիտցած անթերի է իր պարագրկատարել, այս անգամ ալ հանդանակութեան ձեռնարկելով, բաւական կլորիկ գումար մը հաւաքած է, վաղեմի յեղափոխական ծանօթ գործիչ հանգուցեալ Պ. Յ. Չաքրեանի տապանաքար մը կանգնելու նպատակաւ:

Չաքրեան թէպէտեւ վերջերս իր համբաւը աղարտեց հակայեղափոխական ընթացք մը բռնելով, սակայն, դարձեալ տեղւոյս գաղթականութիւնը գիտնալով տնօր անցեալ դերը, զայն կը յարգէ իբր յեղափոխական:

Ինչ մըն ալ առեւտրական վիճակի մասին:

Կաղթականութեան կոչակար գասակարգը, որ արդէն մեծամասնութիւն կը կազմէ, իրեն մէջ ժողով գումարելով որոշում տուած է այլեւս վաճառականներու գերի չըլլալ, այսինքն քիչ աշխատիլ և սուղ ծախել, ու այդ հիման վրայ իրենց մէջ (սէնտիքա) մը կազմեցին և հիմա սկսած են վաճառականները իրենց գերի ընել: Այդ գաղափարը յղացող վարպետները կը շնորհակարտ լինեն, սակայն յամառ տոկոսներով թեմար եթէ շարունակեն իրենց (սէնտիքան):

Ա. ՇԱՀՄԻՐ

Ատիկա արդի բեթիմներուն ընդարձակ հակօրինութիւնն է, Ընդգլուտմէն ծնած անոնք կը ստական իրենց մօրմէն ու զայն կարհամարհեն, ոչինչ այնքան կատեն ու ոչ մէկ բանէ այնքան կը զարհուրին որքան կեղծութեան մը շողորթութիւնէն: Այս հակասութիւնը քիչ մը կը նեղէ զիրենք, ոչ թէ քաղաքագէտներու սիրտը իսկահարութեան ընդունակ ըլլալուն համար, այլ որովհետեւ ծիծաղելիութիւն մը, վտանգ մը կայ ուրանալուն մէջ այն սկզբունքները որոնց կը պարտին գոյութիւններն, որպէս զի ինքզինքնին գնեն յօգուտ անոնց զորս ժխտած ու բռնաբարած են եւ ոսքի տակ առած յետոյ կիկին իրենց օգնութեան կանչելու համար:

Սակայն Պուրկարիա որ երրորդական պետութիւն մըն է, օրինակներ եւ երաշխաւորութիւններ ունի առաջնակարգ պետութիւններու մէջ եւ ասիկա եղականապէս սիրտ տուած պէտք է ըլլայ Գարալիօններու, Տանէֆներու եւ Չանքօններու երբ անոնք կը յարմարին համեստօրէն բուր երկիրներու օրօրդիւնիքներուն ազնիւ օրինակին, եւ խղճատարին կը թափեն իշխանութեան բոլոր խնամութիւնները անխորհուրդ յեղափոխականներուն վրայ, այսօր փորձելուն համար—ինչ որ ոճիւր է, քիչ մը է վէլ քիչ մը պակաս—այն տեսակ գործեր որոնք այնքան արժանաւորապէս կատարուած են նրբեմն այդ մեծ մարդոց ձեռքով իսկ:

ՊԺԳԱԼԻ ԵՐԵՒՈՅԹԸ

Մեր հանրային բարեբուն մէջ գտնուած բազմապիսի թերութիւններուն զխաւարներէն՝ շողորթանութիւնը, անարժան գովասանքը, փառաբանութիւնը ու խնկարկութիւնը աւելի քան երբէք սուր կերպարանքով մը սկսած են շեշտուիլ: Կ. Պօլսոյ ազգային մամուլը, առանց բացարձակեան ամենօրեայ վիթխարի սուտերու ու տխմար քողարկումներու է՛ն գրաւիթ քեռեկը կը ներկայացնէ այսօր, Հոն արդարութիւնը բարոյական կոյանոց մըն է ամէն տեսակ անպատուութիւններու ու կեղծութիւններու: Ազգային անբռնաբարելի իրաւունքներուն հանդէպ, մեր Պօլսոյ խաղերանները ինչ ընթացք բռնեցին օրինակի համար պղծածանօթ վախառու ու աւազակապետ Գարակէօզեանի մը խնդրոյն առթիւ որ 100,000 սոկիւր պատկանելի կտակը՝ մինչեւ 20,000 իշնելու զիջանեցաւ ու անոց մեացին, մինչդեռ աչքերուն տոչեւ, մեր մարտիրոսացած օրբերը որ Ազգային Տառապանքին նուիրագործուած կենդանի մարմնացումները կարձանացնեն, անոնք որ ճիշդ մեզի համար Աւետարանէն աւելի սուրբ՝ պատուի ու պաշտելի պէտք էին ըլլալ՝ տարածք ժօրէն Ազգային Հիւանդանոցի օխտավարակ միջնորդութիւնն ապ, թողաք անգործ ճիւղերը անհոգի ճիւղերը յանձնուցան:

Ու ըսել թէ Պօլսոյ լրագրութիւնը պատասխանատուութեան անեղ բաժին մը չունի՞ այս խորագէտ ցաւելի ու ազգասէր անարարութեանց մէջ: Այդ մեծածաւալ ճիւղերը թողթաւելով ուրիշ բան կայի՞ չէ գտնալ բայց եթէ պիտակալիցութիւն ու ներքողականից ցածնոցի Օրմանեանի մը եւ կամ ցատկաւ Տառապանի մը շտալուած:

Ըսանկ բնաբան մը միշտ փոփոխութիւններու տեղի կուտայ: Հաճութեամբ պիտի ալ աւելի ծանրանայ այս կէտին վրայ, եթէ ինծի տգեղ չեղեալ խտիւրդատապարտել փոքրիկներու մէջ, ինչ որ մեծերը սովորաբար կընեն քաղաքակրթ աշխարհէն ծափեր խելով, ինծի ֆրանսացիներու, հետաքրքրական է փնտռել թէ Մակեդոնիոյ, Պալքանեան թերակղզւոյն արգի կացութեան մէջ, արդեօք մեր ծանր պատասխանատուութեան բաժինը չունի՞նք եւ թէ աւելի լաւ պիտի չըլլա՞ր առաջը առնել կարգ մը գարնուրիկ պատահականութեանց որոնցմով յի է եւրոպական համաձայնութեան արդի քաղաքականութիւնը:

Այս կացութեան մանրամասնութեան մէջ չի պիտի մտնեմ, անիկայ ծանօթ է ԲՅՕ Արմենիայի եւ ապա տուութեան բոլոր անվերջ օրկաններու ընթացքներուն: Սակայն մարդ գիտէ թէ թուրքիա յեղափոխական շարժումը երբեք անթարկուած կը ձեւացնէ ինքզինքը, թէ անձերու եւ սեպհականութեանց դէմ կարծեցեալ ոճիւրներ երեւան կը բերէ, զիւսին ճարակութեամբ մը կը շահագործէ ազգայնութեանց, չհանրու եւ աւանդութիւններու տարադիմութիւնը եւ մինչեւ իսկ Եւրոպայի ազգարարութեան ձեւով, տեսակ մը անգիր արտօնաթուղթ ձեռք անցնելու եւ ատով իր օճիկը ազատելու վարպետութիւն ունեցած է:

Հայկական պատրիարքներու պատմական շրջանէն մինչեւ իր օրը նմանը չը տեսնուած խոզ մը, քաղաքական ամէն անցքերէ անտեղեակ Հաւիթական մը չըլլալիք դաւաճանութեամբ մը ինքզինքը ճանչցուց համայն աշխարհի, երբ Լաւէյի համաժողովին առթիւ՝ բողոքագիրներ տեղացին Եւրոպայի ու Ամերիկայի բովանդակ հայ գաղթականութիւններէն, նմանապէս շատ կարեւոր յիշատակագիր մըն ալ Պօլսոյ Ազգային մարմնի մը կողմէ, ինք Օրմանեան համարձակեցաւ անմիջապէս հեռագրով ուղղել թէ «անհատներ կրնան չամաժողովին պատգամաւորներուն յիշատակագիր ներկայացնել, բայց անոնք սեւ է իրաւասութիւն չունենալը ներկայացնելու, ոչ ալ պաշտօն յանուն Ազգին խօսելու, հետեւաբար զանոնք կարեւորութեան զուրկ պէտք է նկատել»:

Օրը օրին կատարուած այս օրինակ դաւադրութիւններու հանդէպ Ազգը քրիթիք վիճակի մը մատնուած ոչ միայն անոր պատրիարքական յուշ պաշտօնը վերջացած համարելով պատիժ մը չի վճար, այլ ու մանաւանդ կը ձգէ՝ որպէսզի ան Ազգին ճակատագրը ձեռք ատած վարչապետ փաշային հետ, Սուլթանի արեւարբու հաճոյականատուութեան հովանիին տակ, շարունակէ այն հակազգային քաղաքականութիւնը որ Ազգը վերջապէս եղբարական վախճանի մը պիտի հասցնէ:

Ու մտածել որ Պօլսոյ մտաւորական երիտասարդութիւնը եւ մանաւանդ մամուլը յուսահատօրէն անգիտակից իր կոչման գերազանցութեան՝ առիթ չի փակցնել, յաճախ փաղաքական տողեր նուիրել իր վատ ու ժակարոյժ Պատրիարքին եւ վարչապետին:

Տխուր պարագայ մը անգամ մը եւս կուգայ ինձ թելադրել այս խորհրդածութիւնները, Պօլսեցի ռաթիլ:

Երեք աչքի զարնող կէտեր իրաց արդի վիճակը կորոշեն, նախ մակեդոնացիները, որոնք կը պնդեն թէ աշխարհներու լաւագոյնին մէջ իրենց վիճակը լաւագոյնը չէ, եւ կը պահանջեն Պերլինի 23րդ յօդուածին գործադրութիւնը, Երկրորդ, այն պատրուակով թէ Պուրկարիոյ, կը ձգտին իրենց իշխանութեան մէջ ձուլել Մակեդոնիոյ, ինչպէս ըրին Արեւելեան Բուլղարիոյ յոյները, Սերպերը, Ռուսները գրգռուած, թըթուած, լարուած են վտանգաւոր մըրցակիցներու դէմ:

Վերջապէս տեղութիւնները որոնք չի կրցան ձեռք տալ հայկական գայթակղութեան պարկեշտ կարգադրութեանը, որոնք լեւելայն խոստովանեցան իրենց համաձայնութեան անանկութիւնը մարդկութեան դէմ իր նմանը չունեցող ոճի մը հանդէպ եւ որոնք սրբագործեցին գոնէ պատուէրներով Անտառուի շարգերու անարգ քաղաքականութիւնը, եւ հիմակ ալ օգտակար դատեցին զուրս գալ իրենց լուծութեան Ապտիւլ Համիտը յորդորելու համար Մակեդոնիոյ մէջ կարգը հաստատելու:

Այս վերջին իրողութիւնները հրէշային բան մը ունին: Ահա վեհապետ մը որ պէտք էր մարդկային սեւէն զօրս վերանալ, Գրիստոնեայ Եւրոպան չի կրցաւ կամ չուզեց արեան հաշիւը պահպանել անիկ:

Թող ատու անոր անմեղ կուտութիւն մը ստեղծել իրեն եւ վերստին:

ԲՐՈ ԱՐՄՔԻՆԻՍ ԵՒ ՄՍԿՈՒՆԻՍ

«Բէֆօրմ»-էն կը թարգմանենք «Բրո Արմէնիայի խմբագրատան» Պ. Բ. Քրիշտիանի հետեւեալ նամակը զոր զրկած է Մակեդոնական Բարձր. Կոմիտէին, ի պատասխան Մակ. կոմիտէին «Բրո Արմէնիայի» վերջերս խմբագրութեան ուղղած մէկ շնորհակարութեան նամակին:

Խորապէս յուզուած եմ այն համակրական զգացումներէն զորս Մակ. Բարձր. Կոմիտէն ինձի ուղղած է:

Հրապարակելով և մատնանիշ ընելով թրքական հողին վրայ կատարուող անդթութիւնները, մենք միմիայն խստօրէն մեր վրայ ծանրացող մարդկային պարտականութիւն մը կատարած կըլլանք: Ով որ ինձի նման աւելի մօտէն տեսած է զերութեան մատնուածներուն կարմիր Գաղստին ձեռքէն քաշած սրտաճմրկ տանջանքները, պարտաւոր է շարունակ զանոնք պարզել եւ արտակալ ժողովրդին առջեւ, որ անցած քարձածէն լուր չունի և կամ լուր չունենալ կը ձեւացնէ:

Ուստի մենք արժանի չենք ոչ զովասանքներու, և ոչ շնորհակարութիւններու մեր գործերով վերածնութեան և ազատութեան յազմանակին աշխատելուն համար:

Մեր յուզումը ալ աւելի մեծ կըլլայ, երբ բուն իսկ շարձար-

ողները մեզ կը քաջալերեն որ շարունակենք կռիւը, որ կրկնենք շարունակ միեւնոյն կողմը, մինչեւ որ լսելի ըլլայ մեր ձայնը:

Պէտք է գիտնաք որ մենք չի պիտի լքանենք սկսուած կռիւը արիւնով ադոտուած բռնակալի մը և կառավարութեան շարակամութեանց դէմ, որ մասնակից է Սուլթանին յանցանքներուն, ժողովրդական ուժերու անտարբերութեան և ընդգրկմամբարտութեան դէմ, որ այնքան կը պատշաճի ելեւմտական գաղանութեանց:

Մեծապէս օգնած պիտի ըլլաք մեզի, եթէ, մեր հայ բարեկամներուն պէս, դուք ալ մեզի իմացնէք ձեր ընդունած բոլոր նորութիւնները, իրողութիւններ, անուններ, թուականներ: Ահա ինչ որ պէտք է ամեն բանէ առաջ:

Լաւ կըլլար, եթէ մշտական տեղեկութիւններ հաղորդուէին հետեւեալ կէտերուն վրայ, 1. աւերքերու հաւաքման 2. հաղորդակցութեանց և վաճառականական յարաբերութեանց արգիման մասին, 3. ըստ կամս ձերբակալութիւններու և բանտերու մէջ շարձարողներու մասին, 4. կառավարութեան հրամանով կամ գիտակցութեամբ կատարուած սպանութեանց մասին:

Այս տեղեկութիւնները «Բրո Արմէնիայի» Մակեդոնական գործերու յատկացնելու բաժինը կըրոնային աւելի կարեւոր ու փաս-

տալից դարձնել, ձգենք որ ինչ օգուտները զորս պիտի կրնան ունենալ ապահովապէս:

Իմ պնդումը բարեկամս Պ. աը Բրէսանսէ, յանձնարարից ինձի որ, իր կողմէ յայտնեմ ձեզ իր շնորհակարութիւնները ձեր իրեն ուղղած հեռագրին առթիւ: Ան ալ կը խորհի նմանապէս թէ որքան աւելի մեծ ու աւելի աւատ փաստեր տանք մեր կռիւին ինպատ, այնքան աւելի շատ սշանս կունենանք մեր գործին վերջնական յազմանակին:

Վստահ եղիք մեր անվերապահ անձնուիրութեան վրայ, դէպի այդ մարդկային գործը, և ընդունեցէք մեր եղբայրական բարեկամները:

ՊԱՇՏՏՈՒՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ԵՐԿՍԵՌՈՒ ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՎԱՌՆԱՅԻ

Ընկերութեանս Գ. Ընդհանուր ժողովը անգի պիտի ունենար ապրիլ 28ին, բայց անդամոց մեծամասնութիւնը ներկայ չը լինելով, յետագոյնեաց յատկապէս կիրակի մայիս 14ին:

Ուստի կը խնդրուի ընկերութեան անդամներէն յատկապէս կիրակի, կէս օրէն վերջը, ճիշդ ժամը 2ին ներկայ գտնուիլ ընդհանուր ժողովին, որ պիտի գումարուի Ազգ. վարժարանի սրահին մէջ, եւ որու օրակարգն պիտի լինի գործ. ժողովոյ վեցամեայ (մի ամեայ) հաշուաւ կշռի ներկայացուած եւ վաւերացուած:

Ըստ տրամադրութեան կանոնագրի թ. րգ յօդուածին, ներկայ գտնուող անդամներ մեծամասնութիւն պիտի կազմեն:

Մնամք յարգանքով ի դիմաց ընդհ. ժողով. պիւստին Ատենապարտ Վ. Ատենապետի Զարակիսեանց Արշալ. Փաշաբեան Վառնա, 7 Մայիս

շարժելու մը գիտուած ին մէկ կատակովը Բարիկ Նետուած է, բոսթիք արհեստ մը սորվելու համար: Այս hall-ի թիւքը, (որուն առջեւ որ եւ է պատկերահան մը պիտի շուարէր ու. դիմագէտ մը պիտի յուսահատէր վերլուծելու համար անոր կերպարանքին անհրոկեցնող բովանդակ ալանդակութիւնը), հրճուանքէն զինովցած է միայն ակոյ ըստկելու գիւրին աշխատութեան սահմանուած ըլլալուն համար, եւ անձնագրովութեան խելայն յայտնաբերութեամբ մը, գրէթէ ամէն ամիս իր մէկ ազգականին միջնորդութեամբ ու անոր ձեռքով գրուած Պօլսական թերթերու մէջ խանդավառ սուտերով ու չըլլալիք չափազանցութիւններով իր յազմական apologieին կը հիւսէ: Այս երեւոյթը համաստութեան զգացումի ջնջման նկատող ապականիչ նորութիւն մըն է, որ ցարդ երբէք տեսնուած ըլլայ ո եւ է ուսանողի մը կողմէ, նպատակ ունենալով նախապէս բնուէր պատարաստել, որպէսզի ապագայ լրբուէկ յաջողութիւն մը երախտարուած ըլլայ, իր տեղին մէջ:

Հարկ է ըսել թէ նշանակութեան իսպառ զուրկ պիտի ըլլար անհատի մը այս միատուութիւնները, եթէ երբէք Պօլսոյ անտաների խրճարակները աննշան նուէրի մը փոխարէն, կամ պայտղի հաշուի նկատուիներու չի զիջանելով արձագանք չըլլային անոր: Ահա մեր բարոյականի զանազակ տնկման յատկանշական մէկ թապօն որուն առջեւ ամէն հայ ստիպուած է ամօթ զգալ:

Բարիկ, 15 Մայիս
Յ. Գ.— Բարիկի ուսանողական հայ խմբակը, նախաձեռնութեամբ Պ. Գուլամօսեանի, մտադիր է մօտերս գրական ու երաժիշտական երեկոյթ մը տալ, որուն հասոյթը որոշուած է զրկել «Դրոյակ» խմբագրութեան նոյն

ձեռք բերել իր բնութիւնը թեւալից պատերազմի դաշտերուն մէջ: Անիկայ գիտէ թէ ինչ վայրագ գաղան մը ծածկուած է այդ վեհապետին մէջ, որ առաջին նշանով նոր որսի մը վրայ խոյանալ կը պատրաստուի: Չինաստանի մէջ փնտռած բազմաթիւ զինքը բարդութիւններով չըլլապատած են հիմա, եւ եթէ անկարող էր Սուլթանին վրայ հոկի միայն անոր հոգը իր վրայ ունեցած ատեն, հիմա կրկնապէս անկարող է քանի որ երկրի որդիներու քաղաքակրթութիւն սորվեցնելու ձեռնարկած է զանոնք ջարդելով ու կողոպտելով: Ու մինչեւ իսկ չի վարանի զիւսանողական գիտում մը ընել Նըլուրի, որուն հետեւանքը կրնար Հայաստանի արիւնալից ջարդերուն կրկնումը առաջ բերել Մակեդոնիոյ մէջ:

Պաշտանեան թերակղզիին քրիստոնեայ պետութիւններու բոլոր հոգն է փոխադարձաբար զիրար գլել այս ստիպանակին վրայ: Մի խօսք անոնց Ապտիւլ Համիտի հարստատարութեանց զոհ եղողներու հասարակ շահի մասին: Այս քաղաքագէտները պարազանցօրէն իրապաշտ են, ու միայն Ապտիւլ Համիտի բարեացակամ շնորհները իրարու ձեռքէ յափշտակել կը խորհին: Իրենց հիւպատոսները փոխանակ աղբու պաշտպանութիւն մը ցոյց տալու թրքական իշխանութեանց հալածանքին ենթարկուած թշուառներուն համար, այդ հաւատաքննութեան գործակալները կը դառնան ու

կը միանան պուլկարներ և դէմ ի մօտոյ կը ծանուցանեն Ռուսներոյ կարօլ թաղաւորին եւ Յունաստանի Կէլուր թաղաւորին միջեւ աւստրիական հողին վրայ տեսակցութիւն մը ուր դաշնագրի մը պիտի կնքուի Կոլումբիկին հովանաւորութեամբ:

Հոս է կոցուտեան ամենէն ծանր վտանգներէն մին, վերջապէս եւրոպայ յաջողեցաւ բաժնել այն ուժերը որոնք միանալով արդէն մեծ բան մը չի պիտի կազմէին, եւ որոնք բաժնուած՝ անյաջողութեան մատնուած են: Սերպիայէն ինքզինքնին յեղափոխական կարծող ձայներ կը լսուին, որոնք մատնացոյց կընեն պուլկարական բրօքիանտան, կը յայտնեն անոր գործիչները, ու ցածօրէն կը յայտատարարեն թէ աւելի լաւ է Ապտիւլ Համիտի բռնականութիւնը քան թէ հակառակորդ պետութեան մը յաղթանակը:

Ըստ ինչ է այս բոլորը: Անիկալով կը դիւրացնէ եւ կը պատրաստ կարմիր Սուլթանին կատարութեան պայթումը, որուն քով 1876ի պուլկարական վայրագութիւնները եւ հայկական ջարդերը սղու խաղեր պիտի ըլլան: Գիտեմ որ ինքզինքնին ուժով կարծող զիւսանողները ձեռքերին կը չլինեն ու կը հատատեն թէ այս եղբայրասպանկութեանը ճշտապէս Արեւելքի սպանութեան հաւատարմքն են, եւ թէ յեղափոխական շարժումէն վախճալիք բան չիկայ, որքան ատեն այդ սպ-

գութիւնները իրարու դէմ կը կոռուին յօգուտ մեծ Մարդասպանին:

Եթէ այս նշանակալից ապահովումը ճշմարիտ ըլլար, նորէն պէտք էր ձայն բարձրացնել յանուն մարդկային իրաւունքներէն եղեռնական մարդկութեան դէմ, Բայց եւ իմ կողմէս կը պնդեմ թէ՛ այս լաւատեսութիւնը կոյր է: Թէ արեւմտեան զիւսանողութիւնը սխալ ճամբայ կառնէ՝ իրեն ընթացքով յեղափոխական տրամադրութիւններ կը լարուին ամէն կար խաղաղարարները թուրք արգարութեան յանձնելով, իշխանապետութեան հետ յարաբերութիւնները խելոյնով, չի պիտի կարենան դաբաւոր իրձերը խելոյն, արտայայտութեան ձեւը միայն պիտի փոխուի, գետնին տակ նետած պիտի ըլլանք անեղ հոսանք մը, եւ որովհետեւ կը թրոյր դռները կը գոցենք, պայթումի մը պիտի հանգինք:

Չեմ գիտեր ի՞նչ յաջողութիւն պիտի ունենայ, բայց մէկ միջոց կայ այս աղէտքէն ազատելու: Պետութիւններուն ձեռքն է սն, Օսմ. կայսրութիւնը միջազգային դաշնագիր մը ունի, Պելլինի դաշնագիրը: Այս դաշնագիրը մեծուտ առ միացած չեւ մը կէտերու հետ կը պարունակէ 23րդ յօդուած մը որ եթէ գործադրուէր այդ գործադր ժողովուրդներուն քաղաքակրթի կեանքի տարբեր պիտի սպահովէր կարժէ սր արեւմտեան

զիւսանողութիւնը անգամ մը գոնէ կանխատեսութեան եւ կանխագոշնութեան սպասող մը տուած ըլլար: Թող իշխանութեան չափազանցութեանը եւ Դրան զեղծութեանը յուսահատ ապստամբութիւն մը յոռաջ բերեն, կամ քանի մը չափազանց խանդոտ գործիչներու անխոհեմութիւններն ու անճարակութիւնները Ապտիւլ Համիտի սոսիթ ընծայեն, քրիստոնէութեան լիկ մեղադրութեամբ, նոր զոհի մը արիւնը խմելու: ամէն պարագայի տակ, Մակեդոնիոյ մէջ յուզումը այն աստիճան է որ կարելի է այժմէն ծանրակլոն դէպքերուն սպասել:

Փոթորիկը կասեցնելու միակ միջոցն է դաշնագիրներու անկեղծօրէն, պարկեշտօրէն, քաջ, բար գործադրութիւնը: Ուրիշ կարեւոր սուսակութեանց հետ, այս խոսքով մեթոտը պիտի ցրուէ ազգերու մէջ սիրող շարագուշակ անհակացողութիւնները, որոնց ճշմարիտ շահը գուտտի մը Յունաստանի, Սերպիոյ կամ Պուլկարիոյ պատահական կցումի մասին վիճելուն մէջ, չի կայ նար, ոյլ նոր ինքնավար տիրութեան մը հաստատումը պատրաստելուն մէջ, որ ազատ Պաշտանեան դաշնակցութեան անդամներէն մէկը կազմէ:

Յրակալի սը Բրիտանիս
Pro Արմէնիա

Թ Ո Ւ Ի Կ Ւ Ս

Ռուսաստանի Մոզտակ քաղաքին մէջ մեռեր է վաճառական Գարբիէլ Խարախանեանց, որ Գէորգեան ճէմարանին կտակեր է 8000 ռուպլ, այն պայմանաւ որ այդ գումարը մնայ պետական գրամատուներ և տոկոսովը քանի մը Մոզտակցի տղաներ ուսում առնեն ճէմարանին մէջ:

— Թուամանիոյ Իպրաիլ քաղաքէն Պատրիարքարանին կը գրեն թէ տեղւոյն Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն ձախակողմեան պահարանը ամբողջ պարունակութեամբ հրոյ ճարակ եղած է Ապրիլ 22 ին, կիրակի կէս օրին ցաւալի անպզուշուծեան մը հետեւանքով: Պահարանին մէջ գտնուած բոլոր գոյքերը այրեր են:

— Ամասիոյ առաջնորդ Արիստակէս Վանքեան Կրօն. ժողովին գանգատ յայտներ է այն անկարգ կրօնաւորներուն համար, որոնք ապաշխարութեան նպատակով իր առաջնորդական թեմը զրկուած են: Ասոնք ժողովրդին մէջ անհամաձայնութիւններ սերմանելէ զատ, կարգ մը գործերով կը զբաղին, որոնք եկեղեցականութենէ աւելի շահարեք են: Չենք հասկնար թէ ինչու այդ տեսակները քահանայութեան մէջ կը պահուին անտաննի բռն մը զառնալով ժողովրդին: Եթէ ապաշխարելու համար է, թող քաղաքէն դուրս վանքերը զրկուին: Արդեօք Պատրիարքարանը տնտեսմէ բա՛ն մը կը սպասէ, որ շուրջը իրմէ բաժնել:

— Կրօնական ժողովի որոշումներուն մէջ կը կարգանք հետեւեալը:

Պուկարիոյ այցելու հովիւ Բարթեղիմէոս վրդ. և Շումլայի Թապ. խորհուրդը Օհան քահայ. Մանդակունիի արարքներու մասին անդեկութիւններ հաղորդած և անոր հետեւումը խնդրած էին: Ժողովը նկատելով որ յիշեալ քահանան կուսակցութիւններ կազմելով խռովութիւններ կը յարուցանէ յանձնարարեց Բարթեղիմէոս վրդ. ի զայն իր պաշտօնէն հրաժարեցնել:

— Անգլիոյ թագաւորին կրտսեր քոյրը, Պէաթրիս իշխանուհին վերջերս Վենետիկ ուղևորած ըլլալով, այցելի է նաև Ս. Ղազարու Վանքը՝ ուր Աբրահամ և միաբանութեան կողմէ ընդունուեր և վանքին ամեն մասերը այցելել է: Իշխանուհին մեկնելէ առաջ իր գոհունակութիւնը յայտներ է միաբանութեան:

Բրէվէզաի մութսարըք էֆէնտին ձերբակալեր է յունաց Գոլմա վարդապետը բանէլէնիզմի բրորականտ ընելուն համար: Առնուած հիւպատոսական տեղեկութեանց համեմատ այդ ամբաստանութիւնը անհիմն է եղեր և յունաց գեսպանը Մալրոքորտագօ Ռուսիոյ գեսպանին հետ իրար զիմուժ ըրեր, իսկ պատրիարքն ալ Բ. Դրան գիմեր է վարդապետը ազատելու համար:

— Երկու ալպանացի առաջակախուժներ Թուրքիոյ սահմանէն Սերպիա անցնելով, Պրոչոլայի մօտ և Օրնիշթէի քով սպաններ են սերպ գիւղացի մը ուրիշ մըն ալ վիրաւորեր են: Քերպիոյ գեսպանը մայիս 2ին նօթա մը ներկայացուցեր է Բ. Դրան, որով կը յայտարարէ թէ Սերպիոյ կառավարութիւնը երկու գրացի երկիրներու շահը նկատի ունենալով այժմէն ամենախիստ միջոցներու կը գիմէ յառաջիկային այդ օրինակ դէպքերու կրկնումը արգելելու համար և կը խնդրէ Դրանէն որպէս զի անոնք ալ նոյն միջոցներուն գիմեն յանցաւորները պատժելու համար:

— Բ. Դուռը կը պատրաստուի նոր ծանուցագիր մը զրկել գեսպաններուն փոստի խնդրին առթիւ: Դուռը նպատակ ունի բարձրացնել օտար նաւերուն Թուրքիոյ ջուրերուն մէջ վճարած տուրքը և ջնջել անոնց արուած զիւրութիւնները, որովհետև այս վերջինները կը մերժեն տաճկական փոստի պայտասկները ընդունիլ: Կրան թէ Բեթերպուրկէն առնուած հրամանի մը համաձայն ուսական շոգենաւներն ալ պիտի մերժեն տաճկաց փոստը ընդունիլ:

— Եպարքոս Բիֆաթ փաշա արդէն իր հրաժարականը տուած է ծերութիւնը առարկելով, բայց չէ ընդունուած: Կը կարծուի թէ սակայն նախարարական փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ:

— Բ. Դուռը նոր ծրագիր մը զրկած է, որով կը բացատրէ թէ իր առջի երկու ծանուցագիրները ոչ մէկ վիրաւորիչ հանգամանք չունին, քանի որ անոնց մէջ կրկնուած էր ինչ որ Դուռը յօճախ պահանջած է, այսինքն գոհարներու մաքսանեցումիւն և քիսակար գրութեանց շրջաբերութիւն վախճան մը:

Մանուցագիրը կը վերջանայ գեսպաններէն խնդրելով այդ մաքսանեցումիւն և գրութեանց խնդրին լուծումը, Դրան հետ համաձայնութեամբ, բայց թըզթատարական խնդրի մասին լուռ կը մնայ:

— Սելանիկի կուսակալ Հասան փաշան պաշտօնանկ ըլլալով կուսակալութիւնը առժամապէս յանձնուած է զինուորական տեղակալ հրամանատար Խայրի փաշաի մինչև որ նորընտիր կուսակալ Թէֆֆիք պէյը իր պաշտօնատեղին հասնի: Հաճի Հասան փաշա մակեդոնական խնդրոյն մէջ պուլկարները տանջած ըլլալուն համար շնորհագուրկ եղած է:

— Պաղէստինի ընկերակցութեան (Սիօն) հիմնադիր Տօքթ. Հէրցըլ Ռօզիշաի և Պէլօյ-հրէալը գրամատուներու ներկայացուցիչներուն հետ Պօլիս հասած է Սուլթանին առաջարկելու փոխառութիւն մը, պայմանաւ որ Ապտիւլ Համիտ շնորհգիմանայ հրէաներուն Պաղէստինի մէջ հաւաքուիլը:

— Սուլթանի դէմ դաւադրութեան մը հետքը երևան հաներ է Իզլէթ պէյ Երլուչի այդ միջոցով որ միանգամայն Համիտի ալ բաղուին է:

Դաւադրութեան իբրև պատժաւանանիշ կըլլայ գահաժողովը և կատարել Համիտի եղբայր Բէշատ էֆէնտին որ կուղէ ելեր ինչպէս Սուլթան Մուրատը գահընկեց ըրաւ (.) այնպէս ալ Սուլթան Համիտը ընել: Կը կարծուի թէ այս դաւադրութիւնը երեւան ելլալուն արդիւնքն է օտար փոստաներու բռնաբարումը:

— Մտոյս Եին նամակներու գրաման հետեւանքով բաւական թուրքեր ձերբակալած են, որոնց մէջ կը գտնուին նաև Սթամպուլի Պաթիհ միջիթին մուէզլինը, Լուր կը պատի թէ նախկին ելեմսական նախարար Բէշատ փաշա փախած է:

— «Մօրնիկ Բօստի» Վիէննայի թղթակիցը կը հեռագրէ: «Էնֆօրմասիօն» թերթը որ Պալքանիան գործերու մօտէն տեղեկ է, կիմացնէ թէ թղթատարական վէճին իրական պատճառն է Սուլթանի այն որոշումը որով տէր ըլլալ կուղէ զինքը գահընկեց ընելու և Բէշատը նստեցնելու դաւադրութիւններ պարունակող նամակներուն: Կըսուի թէ դաւադրիւնը յաջողած են Սուլթանի ընտանիքին բաղմամբ անդամները իրենց կողմը որալ և ասիկայ սարսափ կազդէ իրեն:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Սօպրանիէն կառավարութեան մէկ օրինագիծը ընդունած է երկրին վարչական բաժանումին վերաբերեալ, որով նահանգներու թիւը տասներկուքի կը վերածուի (հիմայ 18ն է) և այս կերպով 3 միլիոն ֆրանքի խնայողութիւն մը կը գոյանայ:

Վերջերս նշմարելի եղած է Պուքրէշի Ռուսական զինուորական կցորդ Լէոնտիէֆի յաճախակի այցելութիւնները Սօֆիայի ռուսական գեսպան Պահմէթիէֆին: Իշխանը անոր բարձրագոյն շքանշանը տուեր է:

Նախարարապետ Քարապէլօֆ Սօպրանիէի առաջարկած է վարչական շրջանակներու թուին յապաւման խնդրը, որ աւելի գահլիճի կամ անձնական խնդրի հանգամանք ունի: Կը կարծուի թէ այնպէսով պիտի կարենալ ելքի ճամբայ մը գտնել այն տեսակ նախարարութեան մը մէջ ուր այլևս ինքզինքը հանգիստ չի տեսներ մանաւանդ նկատելով իշխանին զօրաւար Բարբիքովի ընծայած նախապատուութիւնը և ցանքովսաներու ունեցած մեծամասնութիւնը Սլավէյքովի մահտանէն ի վեր:

Քարապէլօֆ խոստացած է Ալէքսանտր Բ. ի յիշատակարանին բացման առնել հակառուսական ցոյցեր ընող ուսանողներուն թէ իրենց պատիժները պիտի թեթեւացուին:

— Պէրլինէն Նիւ Եօրք Հէրալտի կը գրեն թէ Պուքրէշի Ռուս գործակատարութեան զինուորական կցորդը՝ գնդապետ Լէոնտիէֆ Ֆէրանանտ իշխանին յանձնած է Չարին ինքնագիր նամակը որով զինքը Բէթիքուպուրկ այցելութեան կը հրաւիրէ Յուլիս ամսոյ մէջ: Քաղաքական շրջանակներու մէջ կը կարծուի թէ այս հրաւերը պատտասան մըն է վերջերս Ռուսիոյ և Յունաստանի թագաւորներուն Ապալիաի մէջ ունեցած տեսակցութեան որ կը վերաբերի պալքանեան խնդրներու մանաւանդ Մակեդոնականին՝ որ անհանգիստ ըրած է Ռուսիան և Յունաստանը միանգամայն:

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ Հաճի Բաւախօ

«Վառիէթէ» խմբին կողմանէ վաղը գիշեր պիտի ներկայացուի առաջին անգամ ըլլալով «Երկու եղբայրներ» խիստ բարոյայից բանաստեղծա 4 արար «Հիմմէտ Աղա» խիստ ծիծաղաշարժ զաւետ 3 արար:

Նոյնպէս ուրբաթ գիշեր պիտի ներկայացուի «Մարգասպանին վերջին ժամը» բանաստեղծա 4 արար:

«Թոյնի սափոր» խիստ ծիծաղաշարժ զաւետ 3 արար:

Անկուտիներ և նախաստի պարերը Օր. Մարիքայի և Պ. Գ. Յակոբեանի կողմանէ:

Ամէն լիզուէ քանթօներ Մատալ Լուծիգայի և Օր. Չօիցայի կողմէ:

ОТГОВОРНИКЪ: Д-ръ М.ХИЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность — Варна.